



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 07 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000060

Ձեռնարկողը՝

«Հույս-Մոտոր» ՍՊԸ
Ք. Երևան, Ջավարյան 12

Գործունեությունը՝

Բանեցրած թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման, վնասազերծման, օգտահանման և տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000060

<<17 >> 07 2019թ.

Բանեցրած թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման, վնասազերծման, օգտահանման և տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական, նկարագրական մասեր

Ձեռնարկող՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ գնահատման հաշվետվություն
և կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևանի Էրեբունի վարչական շրջանի արտադրական գոտի

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանեցրած թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման, վնասազերծման, օգտահանման և տեղափոխման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Էրեբունի վարչական շրջանի արտադրական գոտում՝ Արին Բերդի 5/4 հասցեում: Գործունեությունն իրականացվելու է (անշարժ գույքի սեփականության թիվ 2198959 վկայական) 145 մ² մակերեսով վարձակալված շինությունում (պայմանագիր՝ 23.11.2018թ, ժամկետ՝ 1 տարի):

Գործունեության նպատակն է հավաքել, պահեստավորել, տեղափոխել, վնասազերծել հանրապետության տարբեր վայրերում կուտակված ավտոմեքենաների բանեցրած թթվային մարտկոցները: Նախատեսվող գործունեության տարածքը բնակելի չէ, առկա են միայն արտադրական ձեռնարկություններ և պահեստային տարածքներ: Գործունեության բուն տարածքին հարակից են Հայկոպի բազան իր պահեստներով, տպարանը, հեղուկ գազի պահեստը և այլ արտադրամասեր: Մոտակա բնակելի տները գործունեության տարածքից գտնվում են մոտ 1 կմ հեռավորության վրա:

Գործունեության իրականացման տարածքում բացակայում են բաց հողատարածքները, ջրային ավազանները, գրունտային ջրերը: Ամենամոտը Հրազդան գետն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 2 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի խիտ կառուցապատված մասում, որով էլ պայմանավորված է գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների բացակայությունը:



Նախատեսվող գործունեության տարածքում չկան նաև պատմամշակութային արժեքներ: Ամենամոտ պատմամշակութային արժեքը գտնվում է 2 կմ հեռավորության վրա:

Գնահատման հաշվետվությունում դիտարկվել են գործունեության իրականացման զրոյական, այլընտրանքային տարբերակների վերլուծությունները՝ համապատասխան գնահատումներով: Վերլուծվել են թթվային մարտկոցների հավաքման 2 տարբերակները.

Ա - ընդունել միայն դատարկ մարտկոցներ, որոնք կուտակվելու են պահեստում և որոշակի քանակի դեպքում վաճառվելու են,

Բ - ընդունել ինչպես լրակազմ, այնպես էլ դատարկ կամ մասնատված մարտկոցներ, որոնցից լուծույթը դատարկելուց և վնասազերծելուց հետո կուտակվելու են պահեստում և վաճառվելու են:

Ընկերության կողմից այլընտրանքների վերլուծության, շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների գնահատումների հիման վրա, ընտրվել է բանեցրած թթվային մարտկոցների հավաքման Բ տարբերակը:

Համաձայն գնահատման հաշվետվության ընկերությունը նախատեսում է հավաքել ավտոմեքենաներում օգտագործվող՝ բանեցրած կապար-թթվային մարտկոցները (երկրորդային մարտկոցներ), որոնք լիցքաթափվելուց հետո կարող են վերալիցքավորվել և կրկին օգտագործվել: Բանեցրած մարտկոցները կազմված են պլաստմասե իրանից (10%), կապարե թիթեղներից (70-75%) և էլեկտրոլիտից (ծծմբական թթու՝ 10-18%), որոնք կարող են վնասակար ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդու օրգանիզմի վրա:

Համաձայն Բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի № 430-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի, բանեցված չվնասված կապարե կուտակիչները դասվում են վտանգավորության 3-րդ դասին (ծածկագիր՝ 92110102 13 01 3): Մարտկոցների հավաքման տարեկան ծավալները կազմվելու են 250 տ/տարի, որոնց 80-90%-ը լինելու են լրակազմ մարտկոցները:

Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնելու է 145 քմ, որից 90 մ² էլեկտրոլիտ չպարունակող մարտկոցների պահեստն է, իսկ 55 մ²՝ լուծույթների չեզոքացման տեղամասը և էլեկտրոլիտ պարունակող մարտկոցների պահեստը: Պահեստը գտնվելու է փակ շինությունում, ունենալու է բետոնապատ հատակ և նախատեսված է լինելու մինչև 150 տոննա մարտկոցների պահեստավորման համար: Տարածքները մեկուսացված են լինելու միջնապատով: Չեզոքացման տեղամասում տեղադրվելու են 2 հատ 100 լիտր տարողությամբ պոլիմերային նյութից պատրաստված տարողություններ (ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 51760-2011)՝ 12 ամիս օգտագործման ժամկետով:

Ըստ հաշվետվության մատակարարները մարտկոցներն ընկերություն են բերելու իրենց տրանսպորտային միջոցներով, որոնք ընդունվելու և կուտակվելու են փակ շինությունում: Այստեղ կատարվելու է մարտկոցների ստուգում և տեսակավորում, որից հետո՝ դատարկ մարտկոցները տեղափոխվելու են բետոնապատ հատակով պահեստ: Փակ (թթու պարունակող) մարտկոցները տեղափոխվելու են չեզոքացման տեղամաս, որտեղ լուծույթը դատարկվելու է հատուկ թթվակայուն նյութից պատրաստված, հերմետիկ փակվող պոլիմերային տարողությունների մեջ: Ծծմբական թթվից դատարկված տարաները լվացվելու են սոդայով և պահվելու են պահեստում՝ հետագայում օգտագործելու նպատակով:

Ընկերության կողմից ուսումնասիրվել են էլեկտրոլիտի չեզոքացման 3 եղանակներ՝ էլեկտրոլիտի չեզոքացումը կրով, կալցինացված սոդայով, կաուստիկ սոդայով: Համաձայն գնահատման հաշվետվության ընկերությունը նախատեսել է մարտկոցների չեզոքացումը իրականացնել չհանգած կրով (CaO): Կիրն արտադրական տարածք է բերվելու պարկերով և պահեստավորվելու է թթվի կուտակման տարողության տեղամասում՝ չեզոքացման արտադրամասում:



Կուտակման տարողության մեջ որոշակի քանակությամբ թթու հավաքելուց հետո pH-մետրի միջոցով չափվելու է թթվայնությունը, որը հիմք է հանդիսանալու տարողության մեջ լցվող կրի անհրաժեշտ քանակը որոշելու համար: 100 կգ էլեկտրոլիտի՝ ծծմբական թթվի չեզոքացման համար պահանջվելու է 19 կգ կիր, որի արդյունքում առաջանալու է խոնավ (119.1 կգ) և չոր (42.7 կգ) նստվածք: Չեզոքացված լուծույթը հնարավոր այլ նյութերից (կապար) զտելու համար, մինչև չեզոքացման գործընթացի սկսելը կատարվելու է կապարի իոնների հեռացում (նստվածքի ձևով)՝ ծծմբական թթվի լուծույթին փոքր քանակությամբ աղաթթու ավելացնելու միջոցով: Նստվածքը լուծույթից առանձնացնելու արդյունքում ստացվելու է արժեք ունեցող քիմիական ռեակտիվ: Ստացված կապարի քլորիդը (տարեկան 0,4 կգ) լցվելու է ապակյա տարաների մեջ, պահեստավորվելու է էլեկտրոլիտ չպարունակող մարտկոցների պահեստում՝ մարտկոց արտադրող կամ վերանորոգող կազմակերպություններին վաճառելու նպատակով:

Ծծմբական թթուն կրով չեզոքացնելու արդյունքում ստացվելու է նաև անվտանգ գիպս (տարեկան 5204 կգ), որը չի պարունակելու կապար և կապարի միացություններ: Այն կարող է օգտագործվել շինարարարության մեջ: Գիպսը տեղադրվելու է ստվարաթղթե արկղերի մեջ, պահվելու է պահեստում՝ վաճառելու նպատակով:

Դատարկած մարտկոցները կուտակվելու են դատարկ մարտկոցների համար նախատեսված պահեստում, վերամշակող կամ օտարերկրյա կազմակերպություններին վաճառելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է հումք (կիր), աղաթթու և թթվակայուն տարաներ, բնառեսուրսներից՝ ջուր: Աշխատակիցներն օգտվելու են համայնքի գոյություն ունեցող կոյուղու և ջրամատակարարման համակարգից: Էներգամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները կատարվելու են համապատասխան ընկերությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն: Տարածքում տեղադրվելու է 1 հատ ջրի պահուստային տարողություն: Ջուրն օգտագործվելու է արտադրական նպատակների և սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար (58.88 մ³/տարի):

Համաձայն գնահատման հաշվետվությունում բերված հաշվարկների, գործունեության իրականացման հետևանքով ծծմբական թթվի գազերի (աերոզոլի) կոնցենտրացիան լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում:

Էլեկտրոլիտի չեզոքացումից հետո մնալու է աննշան քանակությամբ կրաջուր, որը չի պարունակելու վնասակար միացություններ և օգտագործվելու է հետագա նոր խմբաքանակների վնասագերծման համար կամ լցվելու է կոյուղի:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Ազդեցությունները հիմնականում կապված են լինելու թափոնների տեղափոխման, օդում ծծմբական թթվի և ծծմբի երկօքսիդի պարունակության ավելացման, արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ, որոնք շրջակա միջավայրի վրա կունենան ազդեցություններ՝ թույլատրելի նորմերի սահմաններում: Գործունեության իրականացումը չի ունենալու համալիր ազդեցություններ, քանի որ տարածքում բացակայում են արտանետումներ ունեցող այլ արտադրություններ: Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի ավազանի ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում)՝

- գնված մարտկոցների տեղափոխում՝ փակ թափքով մեքենաներով,
- բանեցրած մարտկոցների պահեստավորում՝ հատուկ հատկացված պահեստում,
- բանեցրած մարտկոցների տեղադրում 5 սմ բարձրություն ունեցող տակիներով վրա՝ հատակին էլեկտրոլիտի թափվելը բացառելու համար,



- օդում ծծմբական թթվի աերոզոլների քանակի վերահսկում, ամենօրյա ստուգումների կատարում,

- աշխատակիցներին համապատասխան արտահագուստի և այլ պաշտպանական միջոցների հատկացում՝ վերին շնչառական ուղիները պաշտպանելու, այրվածքներից, թունավորումից և այլ պատահարներից խուսափելու համար,

- թթուների պահում թթվակայուն նյութերին համապատասխանող և հերմետիկ փակվող տարաների մեջ,

- աշխատանքային տարածքի ամենօրյա մաքրում՝ խոնավ միջոցներով,

- հատակին ծծմբական թթվի լուծույթ թափվելու դեպքում՝ սողայի լուծույթով մաքրում,

- թթուն դատարկելու համար հատուկ պոմպի կիրառում,

- արտակարգ և վթարային իրավիճակների առաջացման դեպքում՝ գործունեության դադարեցում և այլն:

Միջոցառումների կատարման համար նախատեսվող ծախսերը կազմելու է տարեկան 120.0 հազար դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. հանրապետության տարբեր վայրերից կուտակված (լրակազմ և դատարկ) բանեցրած մարտկոցների հավաքումը, վնասագերծումը կկանխարգելի թթվային մնացորդներով (լուծույթներ) շրջակա միջավայրի աղտոտումը, կնվազեցնի և կկանխի անկազմակերպ արտանետումները: Նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի թույլատրելի նորմերի սահմաններում:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) և հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարումը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:

2. Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը, բացառելով բաց տարածքում մարտկոցների պահպանումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանեցրած թթվային մարտկոցների հավաքման, պահեստավորման, վնասագերծման, օգտահանման և տեղափոխման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Թ. Նուրիջանյան